

ՅՈՐԲԵԼԵԱՆԸ ԵՒ «ԹԱՆԻՆ»

«Թանին» իր երէկի թիւին մէջ համակրական տողեր կը նուիրէ Հայ Տառերու Յորելեանին և կառավարութեան մասնակցութիւնը յիշելով կ'ըսէ թէ «Անիկա իր այդ ընթացքով ամբողջ աշխարհի հաւաստեց թէ Հայ ժողովուրդը ո'րքան կարեւոր դիրք կը գրաւէ օսմանեան կեանքին մէջ : Հայերու վերաբերող ամէն վշտալի կամ ուրախալի դէպք ամբողջ օսմ. ընտանիքը կը շահագրգռէ միեւնոյն կերպով» :

Յետոյ կ'աւելցնէ .

Գիրերու գիւտին առթիւ մաղթանքներ ընելէ վերջ , ցաւ կը յայտնենք Ատաբազարի դէպքին համար : Բնաւ տարակոյս չունինք թէ մեր հայրենակիցներն ալ մեզի չափ և կարելի է մեզմէ աւելի կը ցաւին այս դէպքին համար : Ամէն դասանքներու վայրերուն մէջ թերակիրթ խանդարիչներ կը գտնուին : Եթէ այսպէս չըլլայ , շատ մը հարսնիքներու մէջ գինովութեան կամ անկրթութեան հետեւանքով ուճիրներ չեն գործուիր :

«Ատաբազարի դէպքն ալ այդ կերպով կ'ուզենք ըմբռնել : Ոճիրն ու յարձակումը և ոչ մէկ տեղ արդարանալի են , բայց երբ տարրերու միջեւ եղբայրակցութիւնը հաստատելու ծառայող զուարթ ցոյցի մը պահուն տեղի ունենան անոնք , բոլորովին տգեղ բան մը կ'ըլլան : Այս տգեղութիւնը փարատելու համար կառավարութիւնը պիտի գործ դնէ իր պարտականութիւնը՝ յանցաւորները պատժելու մասին և նոյնիսկ այդ առթիւ ամէնէն աւելի պիտի օգտուի մեր Հայ հայրենակիցներուն աջակցութենէն : Կառավարութիւնը եթէ ներէ Ատաբազարի ոճիրը գործողներուն , Հայերը պէտք չէ ներեն» :

«Թանին» իր նոյն թիւին մէջ նոյնպէս երկար մանրամասնութիւններ կուտայ Ատաբազարի դէպքին մասին և իր կողմէ կարգ մը խորհրդածու-